Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՎԵՏԻՍ ՅԱՓՈՒՋՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻՍՐ ԱՒԵՏԻՍ ԵԱՓՈՒՃԵԱՆ, ՈՐ Ի ՍԻՏՆԻ, ԱՒՍՏՐԱԼԻԱ

Աւստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիօզեանից գոհունակութեամբ տեղեկացանք, որ այս տարի լրանում է Ձեր ծննդեան 75 եւ գրական-հասարակական գործունէութեան 60-րդ տարեդարձերը: Նշանակալի այս առիթով Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ հաւատքի մեր նուիրական վէմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

Մեծարգոյ այրն Եափուճեան, Ձեր կեանքի յիշարժան այս հանգրուանը Դուք դիմաւորում էք ազգօգուտ գործունէութեան հարուստ վաստակով ծանրաբեռն, ճանաչուած ու սիրուած մեր ժողովրդի կողմից՝ որպէս անուանի մտաւորական, գրող ու հրապարակախօս, ազգային գործիչ: Ձեր ողջ կեանքի ընթացքում Դուք բարոյ ծառայութիւն էք մատուցել՝ ի պահպանութիւն հայոց լեզուի, ի զարգացումն հայ գրականութեան ու մշակոյթի եւ ի նպաստ հայակերտումի նուիրական գործի:

Տասնեակ տարիներ Դուք յաջողութեամբ աշխատակցել էք Սփիւռքեան կեանքում յայտնի «Զարթօնք» եւ «Պայքար» օրաթերթերին, «Կեանք եւ Գիր» եւ «Շիրակ» ամսագրերին, «Նոր Օր» եւ «Նայիրի» շաբաթաթերթերին՝ Ձեր կարողութիւնները ներդնելով յանուն հայալեզու պարբերականների ազգանուէր առաքելութեան: Ձեր ջանքերն առաւել արդիւնաւորուել են Ձեր ծննդավայր Կահիրէի «Արեւ» օրաթերթում, որի խմբագրի պաշտօնում աւելի քան երկու տասնամեակ ծառայեցիք Դուք՝ հոգեմտաւոր սնունդ մատռուակելով թեր-

թի ընթերցողներին եւ նպաստելով նրանց հոգիներում ազգանուէր ոգու ու նկարագրի ձեւաւորմանն ու պահպանմանը: Գովաբժան գործունէութիւնը Դուք շարունակում էք այսօր նաեւ Աստրալիայում՝ հեռաւոր ովկիանից այն կողմ նոյն նախանձախնդրութեամբ խմբագրելով ՀԲԸ Միութեան «Միութիւն» ամսագիրը:

Պերճախօս է նաեւ Ձեր ստեղծագործական գործունէութիւնը: Ձեր հեղինակած ու թարգմանած բազմաթիւ գրքերը, հրապարակախօսական յոդուածները ճոխացնում են արդի հայ գրականութեան անդաստանը, մանաւանդ սփիւռքեան կեանքի մէջ:

Մեծարգոյ պրն Եափուճեան, ի գնահատութիւն ազգային մեր կեանքում Ձեր երկարամեայ արդիւնաշատ գործունէութեան, սիրով ընդառաջում ենք բարեջան Ձեր Առաջնորդի ազնիւ խնդրանքին եւ Ձեր ծննդեան 75 եւ գրական-հասարակական գործունէութեան 60-րդ տարեդարձերի առիթով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, որ Իր Հայրական օրհնութեան ներքոյ պարգեւի Ձեզ քաջառողջ երկար կեանք, գործոց մշտանորոգ յաջողութիւններ եւ երկնատուր ամենայն բարիք՝ նոր ոգեւորութեամբ եւ խանդավառութեամբ ծառայելու մեր ժողովրդին ու Եկեղեցուն:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Մարտի
Յամի Տեառն 2005 եւ ի թուին հայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 288